ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St. New York, N. Y. Vol. IV, 1894

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՆԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

ՊԱՅՄԱՆԸ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրի համար
Երկու տոլար կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փրոֆ. Թումայեան կ'աշխատի.— Ամերիկացի Հայոց պաշտպանութեան խնդիրն.— Արտաքին Քաղաքականութիւն Հայոց. Անգլիա, Ռուսիա և Հայաստան.— Համառօտ պատմութիւն Ռուսահայ Շարժմանց. Նամակ Կարսէն— Ծառ. Տեառն Սարգիս Լազ Կարապետի ի Վերայ Շիրմին Լեւոնի Վերջնոյ.— Ընկերվարական նոր հրատարակութիւնք.— Կանոնագրութիւն. Խորհրդանք ի Նիու Եորք.—Նամակ ի Մալաթիոյ— Անգլեհայկական ընկերակցութիւն— Այլ և այլք։

ՓՐՈՖ. ԹՈՒՄԱՅԵԱՆ Կ'ԱՇԽԱՏԻ

Լոնտոնի «Տեի Փրէզպիթէրեան» թերթ կը պատմէ թէ Փրոֆ. Թումայեան իւր մէկ սրտառուչ ճառին մէջ յայտարարեր է թէ իւր կեանք փրկելու համար աշխատողներուն երախտապարտ լինելով հանդերձ՝ զրէթէ կը ցաւի իրեն կենաց խնայուած լինելուն՝ տեսնելով որ դրա արդիւքն եղած է ուրիշ բանտարկելոց մասին հոչածութեան նուազումն Անգլիա։ Փրոֆ. Թումայեան կ'ուզէ շարժել Անգլիոյ եկեղեցիներն նեցուկ լինելու բրիտանական կառավարութեան ջանից յօգուտ զոհիցն թրքական անարդարութեան և անզթութեան։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

Բարիզի ԹԱՆ լրագրին ուղղեալ և Ամերիկայի թերթերուն մէջ արտատպուած հեռագրի մի համեմատ՝ ամերիկեան դեսպանն սպառնացեր է Բ.Դրան թէ Իսկէնտէրունի դէմ զրահաւոր պիտի յղէ եթէ անմիջապէս չարձակուին երկու հայ ամերիկացիներն սրք բանտարկուած են այդ քաղաքի մէջ։

Ամերիկայի թերթերն, Ուշինկթընէ հասած տեղեկութեան մի նայելով, չեն կարծեր որ այդպէս սպառնացած լինի դեսպանն, բայց ԹՐԻԲՈՒՆ այն առթիւ ընտիր խմբագրական մի կը հրատարակէ, ինչպէս նաև Քլարէնս Կրիլի մէկ զօրաւոր յօդուած, որովք ուժգնապէս կը քննադատուի Միացեալ Նահանգաց Նախագահի թոյլ քաղաքականութիւնն ի մասին հայ-ամերիկացւոց պաշտպանութեանն ի Թուրքիա։ Ընթերցողք կը յիշեն թէ Ք. Կրիլի ընդհանուր գործակատարն է «Միջազգային օրինաց և կարգի դաշնակցութեան», և ջերմ ջատագով է հայոց իրաւանց։

ԱՐՏԱԲԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՆԳԼԻԱ, ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

(Տես նախորդ թիւն)

Գ

Զեմք կարող, ասացինք, Անգլիական հակառուս բաղձանաց վերայ ձեւել մեր արտաքին քաղաքականութիւն վասն զի չգիտեմք թէ ապագայ ընդհարման մէջ ո՛ր կողմն յաղթող կը հանդիսանայ։

Ճշմարիտ է թէ այսօր աշխարհի մեծագոյն կայսրութիւնն Անգլիացւոցն է, և, որ աւելի էական է, աշխարհի հզօրագոյն ազգն Անգլիացին է։ Ոչ որովհետեւ տիրած է օտար երկրաց՝ անոր համար հզօր է, այլ որովհետեւ հզօր է՝ տիրել կրցած է։ Ցորչափ Անգլիացին իւր անգլիական կամքն, յարատեւութիւնն, կրօնքն, անկախ բնաւորութիւնն, հաստատուն բարոյական և կրօնական հաւատքն պահպանէ, պիտի մնայ հզօր և պիտի լինի տիրող և գերակշիռ։

Անգլիացին զօրութեան հետ ունի նա և քաղաքական ոգի և ողջամիտ սկզբունք։ Նա բռնաւոր չէ. իւր իշխանութեան ներքև գտնուող օտար երկրաց կը թողու ինքնօրինութիւն պատշաճ ատիճանաւ, և բնիկներն կրթելով կը ջանայ զայնս ինքնավարութեան աւելի ընդունակ գործել։ Նոր Զելանտայի և Աւստրալիոյ ժողովուրդք Անգլիոյ իշխանութեան ներքև զարմանալի ատիճանաւ ազատ քաղաքական կազմակերպութիւն ունին։ Հնդկաստանի բնիկք ալ տարիներէ հետէ համաժողովներ կ'ունենան և ինքնօրինութեան աւելի լայն չափեր ստանալու վերայ կը վիճին, որոշումներ քուէարկելով տիրող կառավարութեան կը մատուցանեն անվախ և անելկիւղ։ Եւ Անգլիա ոչ միայն չի զսպեր այդ ժողովներ, այլ և երբեմն Անգլիոյ Խորհրդարանի անդամք ալ իրրեւ հիւր ներկայ կը գտնուին։ Արդէն Հնդկաստանի բնիկք ինքնավարութեան նախնական քայլերուն կը վարժուին և քուէիւք ընտրեալ Խորհուրդներ ունին գործադիր իշխանութեանց քով։

Երբ Հնդկաստան, Աւստրալիա և այլ մեծ երկիրներ այնքան զարգացան որ Անգլիոյ տիրողութենէն բոլորովին անկախ լինիլ մտածեն, յայնժամ Անգլիա պիտի ուզէ իրեն հաւասարապատիւ դաշնակիցներ անել այդ երկիրներ, ինչպէս որ արդէն կը խօսին սմանք այդպիսի դաշնակցութեան մի մասին։

Այդ հզօր ազգին ապագայն աւելի յուսալի է քան այլ սեպ ազգի։

Ուրեմն Անգլիոյ համակրութիւնն մեզ Հայոցս համար յոյժ յարգելի և խնդրելի է։

Դ

Բայց ոչինչ ընդհատ յարգելի և խնդրելի է մեզ նաև Ռուսիոյ համակրութիւնն։

Սակաւիկ մ'ալ Ռուսիոյ այժն, քաղաքականութիւնն, ձգտումնքն քննենք։ Նա մեր մերձաւոր հզօրագոյն պետութիւնն է և շատ կարեւոր դեր կատարած է և հաւանականօրէն պիտի կատարէ Թուրքիոյ և Արեւելից բաշխման ու վերակազմութեան մէջ։

Ռուսիոյ մասին դիտելու առաջին բանն այն է որ այդ տէրութիւն իւր զարգացման յարձակողական ատիճանին մէջ է դեռ. թէև հոկայ, գրեթէ անսահման կայսրութիւն մ'է 120 միլիոն հպատակօք, տակաւին կը ձգտի նոր աշխարհակալութիւններու։ Եւ արդարեւ բաւական հուժկու է իւր շուրջ գտնուած փոքր կամ զառամեալ պետութիւններն իրեն կցելու համար եթէ Անգլիոյ պատկառելի զօրութիւնն արգելք չդնէ։ Ռուսք յիրաւի իւրեանց աշխարհակալական ձգտմանց խափանարար կը նկատեն զԱնգլիա և կ'ատեն զայն իբրեւ իրենց մեծ ոսոխն։ Ռուսիա պատանիական և յարձակողական շրջանին մէջ լինելով բնական է որ աւելի ախորժակ ունենայ փոքր պետութիւններ կուլ տալ քան փոքր պետութիւններ ստեղծել իւր մօտ, տկար պետութիւններու վերջ տալ մանաւանդ քան տկար ժողովուրդներ զօրացունելով անկախ պետութիւններ կազմելու օգնել։

Բայց Ռուսիոյ մասին դիտելու երկրորդ կարեւոր բան մ'ալ կայ, այսինքն

թէ նա սկսած է զգալ թէ տարածութիւնն մեծութիւն չէ և թէ պէտք է ոչ միայն ամիլ այլ և զարգանալ, ոչ միայն քանակն աճեցուցնել այլ և որակն ազնուացուցնել։ Այս փափաքով է որ երկրին փոխադրութեան միջոցներուն վերայ այնքան ծախք կ'անէ և արդէն 20 հազար մղոն երկաթուղի ունի և լաւ նաւահանգիստներ ու նաւեր։ Իրաւ ահագին է Ռուսիոյ ազգային պարտքն, իբր 560 միլիոն անգլիական լիրա, և իւր տարեկան եկամտի մէկ չորրորդն մերձաւորապէս 257 միլիոն ռուպլի, կը նուիրէ տոկոս վճարելու և հին պարտքեր հատուցանելու։ Ռուսիա ծախք շատ կ'անէ, մեծ պարտքի ներքև ինկած է, բայց ծախքերուն կարեւոր մէկ մասն արդիւնաբեր տեսակէն է և երկրին ելմտական զարգացման կը ծառայէ։

Ռուսիա պատանի լինելով՝ ոչ միայն յարձակողական այլ և կազմական գործունէութեան մէջ է։ Կրթական ամեն կարգի հաստատութիւններ ունի, բազմաթիւ համալսարաններ, գիտական ընկերութիւններ և արագ աճող գրականութիւն։

Ինչ արդիւնք կուտան կրթական, ուսումնասիրական այդ գործունէութիւնք. Ռուսք ինչ ասպիճան զարգացման ընդունակ ցեղ մ'են. ի՞նչպիսի միտք և սիրտ ունին. արդեօք պիտի հասնի՞ն բարձրագոյն կարգի քաղաքակիրթ ազգաց աստիճանին և իրենց գիտական, գեղարուեստական, ճարտարարուեստական, գրական և իմաստասիրական արտադրութեամբք պիտի կարենա՞ն ընդհանուր քաղաքակրթութեան նոր զարգացում մի բերել։ Դեռ յոյժ շահեկան հարցեր են։

Կարծեմք առ հասարակ ծանօթ է թէ Ռուսք մտային կազմութեան կողմանէ բարձրագոյն կարգին չեն պատկանիր, և հաւանական չէ որ բազմակողմանի և գերազանց քաղաքակրթութեան մի հասնին։ Երանի՛ թէ ապագայն ստէր այս կարծիք։ Բայց հեռաւորն թողլով մօտ ապագային նայիմք.— Ի՞նչ սկզբամբ կը գործեն այժմ ռուս գործիչք և երկիրն ո՞րպիսի ուղղութեան մէջ յառաջ մղել կ'աշխատին։

Ռուսիոյ գործիչներուն չափաւոր կամ զգօնամիտ կարգին օրինակ մ'էր հայազգի զօրավար Կոմս Լորիս Մելիքոֆ, որ կառավարութիւնն ասպիճանաբար սահմանադրականի վերածել կ'ուզէր։ Նորա քաղաքականութիւնն անյաջող մնաց և այժմ ասպարէզի վերայ չեն նորա գաղափարակիցք։ Ռուսիոյ ճշմարիտ յառաջդիմական գործիչներն ճիշդ այդ կարգի մարդիկն կրնան լինիլ, և արդարեւ մեծ դժբաղդութիւն է երկրին համար որ այդ յառաջդիմականք անգօր ու գրեթէ անգործ կեցած են, և ոմանք արտասահմանի մէջ կը մնան՝ չյամառելով հայրենիք վերադառնալ։

Երկրին ներքին և արտաքին քաղաքականութեան դեռկն պահպանողականաց ձեռքն է, որք համալսարեան են (բանալավիոդ), զի իրենց ազգային դաւանանքի էական մէկ կէտն այն է թէ Զարին հպատակ բոլոր ցեղերն պարտին Ռուսաց եկեղեցին և ռուսերէն լեզուն իւրացունելով՝ բոլորովին ձուլուիլ նոյնանալ ռուս ցեղին հետ։ Այս բանն եթէ կարելի է քաղցրութեամբ կ'ուզեն յաջողցունել, կամաց կամաց, ինչպէս որ Հայոց մէջ մինչև մէկ ասպիճան յաջողցուցած են այնպէս որ ռուսերէն լեզուն Հայոց ընտանեկան լեզու դարձած է շատ տեղ. բայց եթէ հարկ լինի, օրէնքի ուժով ալ կ'ուզեն ձուլման քաղաքականութիւնն յառաջ տանիլ։ Եթէ իրաց տրամաբանական ընթացքին թողուն հաւանական է որ ձուլումն ինքնին և անզգալապէս կատարուի ժամանակաւ, բայց երբ օրէնքներ օգնութեան հասնին, ցեղային դիւրազգածութիւնք կ'արթննան, կը գոռգոռին և ձուլումն անհնար կը դառնայ։ Արդիւնքն կը լինի դժգոհութիւն, որ պատեհ առթիւ շփոթութեան կամ ապստամբութեան կը թարգմանուի

Ուրեմն պահպանողականաց քաղաքականութիւնն գովելի չէ։

Կարեւոր հարցում մի կուգայ հոս ի մէջ։ Ինչո՞ւ ծայրայեղ պահպանողականք կամ համալսարեանք այսպէս գրաւած են գործունէութեան ասպարէզն և յառաջդիմականք կամ ազատականք անկօր կը մնան։

Այդ հարցման ամեն մարդ պատրաստ է պատասխանել թէ ազատականք Զարին կասկածելի են։

Բայց դարձեալ կը հարցանեմք – Ինչո՞ւ այդ ազատականք, երկրին լաւագոյն գործիչներն լինելու կարող մարդիկ, կասկածելի են Զարին։

Կը պատասխանեմք թէ նոքա կասկածելի են Զարին ոչ վասն զի Նորին վեհափառութիւն թշնամի է յառաջդիմութեան

և ոչ վասն զի անկարելի է որ նա ազատական քաղաքականութիւն ընդգրկէ և յառաջ տանի։ Ռուսիոյ մէջ կան սոսիալիսդներ, որք նիհիլիսդ անուամբ ծանօթ են աշխարհի, ահա դոքին իսկ են որ չափաւոր և լուրջ ազատականներն կասկածելի կ'անեն և ասպարէզէ կը զրկեն շընորհիւ այն զզուանքին ու ատելութեան զոր կը ծնուցանեն Զարին մէջ։

Նիհիլիսդներն են որ զՁարն կը խրտուցանեն, և գիտէք թէ խրտչող մարդն միջին սահմանէն շատ եռ կ'երթայ բնականօրէն։ Եւ եթէ յիշեմք թէ ինչ է նիհիլիսդներու պահանջն, չեմք կրնար մեղադրել զՁարն։ Մանաւանդ չմոռնանք թէ նիհիլիսդք ի Ռուսիա և յարատասահմանի կը գործեն մեծ եռանդեամբ և մեծ հոգ կը պատճառեն կառավարութեան։

Հոգ է նաև բոլոր աշխարհի համար թէ Ռուսիոյ մէջ ինչ անել կ'ուզեն նիհիլիսդք. և մեզ Հայոցս ալ հոգ է ճշդիւ գիտնալ թէ մեր հզօր դրացի պետութեան այդ բուռն գործիչք ինչ կ'ուզեն։

Ասեմք համառօտիւ թէ ինչ կ'ուզեն, կամ թէ ինչ չեն ուզեր։

Նիհիլիսդք կ'ուզեն կործանել ռուսական Զարութիւնն, զոր երկրին քաղցկեղն կը համարին. նոքա կը պնդեն թէ Զարերու իշխանութեան ներքոյ ստեղծուած քաղաքական և ընկերային կարգաց մէջ ոչ ինչ չկայ յարգելի, և թէ պէտք է այդ կարգերն ոչնչացուցանել. այդ պատճառաւ ոչնչական կամ նիհիլիսդ կոչուած են, անուն մի զոր հպարտութեամբ կընդունին իրենք, յայտարարելով հանդերձ թէ նիհիլիսմ ոչ այլ ինչ է բայց եթէ ռուսական ընկերվարականութիւն կամ սոսիալիզմ։ Նոքա նոյնպէս կը մերժեն յոյն եկեղեցին ի սպառ սպուռ։ Վերջապէս կ'ուրանան նաև ընտանիքն՝ յայտարարելով թէ ռուսական ընտանիքն, եկեղեցին և ձարութիւնն փտած, խոտելի, ջնջելի են հաւատարապէս։ Եւ որովհետև Զարին կառավարութիւնն սոսկմամբ և դարշանօք կը լսէ այդ ծայրայեղ յայտարարութիւններ և ռուս սոսիալիսդներն մեծ վտանգ կը համարի, կ'ուզէ պատժել, աքսորել, նեղել, ոչնչացուցանել գոյնս որք ամեն ինչ ոչնչացուցանել կը սպառնան։ Եւ ոչնչականք ալ իրենց դէմ գործող պաշտօնէից հետ կը վարուին մահու գործիներով և իրենց պարտք կը համարին սպանութեամբք վրէժ լուծել և ահարկու լինիլ։

Նիհիլիսդներու իմաստութեան չափն իմանալու համար բաղդատեցէք զայնս ազատականաց հետ։ Մելիքոֆի կարգէն եղող ազատականք կը հաւատան թէ գոյ եղող կարգերն պէտք է կամաց կամաց բարեկարգել, ժողովուրդն կրթել, լուսաւորել և նոյն չափով կառավարութիւնն ալ սահմանադրականացուցանել։ Սովորոյթ, աւանդութիւն, ժողովրդի անմշակ վիճակ, Զարի բացարձակ իշխանութիւն պէտք է հաշուի առնուլ և իմանալ թէ եղածներն ջնջել ոչնչացուցանել թէև բաղձալի լինէր, չէր կարելի. պէտք է աշխատիլ երկարաշունչ համբերութեամբ և քայլ առ քայլ յառաջ երթալ, բարեփոխել, բարեկարգել և նորոգել ինչ որ հնացեալ և անկարգ է։

Նիհիլիսդներու կամ աւելի ընդհանուր բառով՝ ռուս սոսիալիսդներու բարի փափաքն ընդունելով հանդերձ, մեք, ինչպէս ընթերցողք կը գուշակեն, բոլորովին մեղադրելի կը գտնեմք զիրենք, զի իրենց հայեցողութիւններն խակ են, և իրենց բուռն միջոցներ անհամակրելի։

Մեք յառաջդիմութեան հաւատացող եմք. և յառաջդիմութիւնն ոստմամբ չի լինիր, այլ քայլափոխով։ Ինչպէս որ Մարդս չէ կարողօր մի կանգուն մի աւելցուցանել իւր հասակի վերայ. նոյնպէս և չի կրնար երկիր մի յեղափոխութեան շնորհիւ յանկարծ հասնիլ բարձր կարգի ընկերային, և քաղաքային ձեւերու։ Ժողովուրդ մի որքան աւելի զգօն և ընդունակ է, նոյնքան հաստատուն և չափաւոր քայլերով կը յառաջանայ և նոյնքան քիչ աղմուկով և վնասով մեծ բարեփոխութիւններ կ'իրագործէ։ Ահա Անգլիա, պանծալի օրինակ, որ կը ցուցնէ թէ զգօն ժողովուրդ մի կրնայ դրեթէ առանց յեղափոխութեան դրեթէ առանց բռնութեան, իւր քաղաքային և ընկերային կարգերն բարձրագոյն աստիճանի վերածել կամաց կամաց։

Նիհիլիսդ կամ սոսիալիսդ հեղինակներ, իրենց բոլոր ուսմանց հակառակ, մի կարեւոր բան հասկանալէ կը վրիպին, այսինքն թէ ընկերային և քաղաքային կարգք պատմականօրէն և ոչ թէ բացարձակօրէն ճշմարիտ և լաւ են, և եթէ պատմութեան ընթացքն է միակ ապահով միջոցն որով երկիր մի կրնայ հասնիլ իրեն յարմար և օգտակար կազմակերպութեանց։ Այսօր եթէ, օրինակի համար,

Ռուս սոսիալիստներ կարենային ջնջել Զարութիւնն, բառնալ ի միջոյ յոյն եկեղեցին, ոչնչացուցանել գոյ եղող բոլոր կարգերն և ձեռնարկէին ամեն ինչ նորէն յօրինել— կը վրիպէին չարաչար և կը լինէին խայտառակ, քանզի անհնար է որ ո և է գիտնականի կամ իմաստասիրի միտքն կարող լինի յանկարծ անել ինչ որ պատմական շրջափոխութիւնն երկար խարխափմամբ և երկար ընթացիւք ի գլուխ պիտի հանէր։ Ռուս սոսիալիստի պահանջն անպատմական և անիմաստասիրական է, և Զարն ալ իրաւունք ունի այդ պահանջի դիմադրելու։ Հասկականալի է նաև որ Նորին Վեհափառութիւնն սոսիալիստ երիտասարդաց յանդուգն յաւակնութենէն խրտչելով այլ ևս չափաւոր և իմաստուն ազատականաց ալ կասկածանօք նայի։ Զարին ներկայ քաղաքականութեան և համապատասխան տարրին զօրութեան համար սոսիալիստք են պատասխանատու։

Ե

Այս դիտողութիւնք կը ցուցնեն թէ Ռուսիոյ ներկայ կազմական շրջանին մէջ իւր գործիչք մեծ իմաստութեամբ չեն ճարտարապետեր։ Սոսիալիստք ատի և համապատասխանք անտի կը խափանեն պետութեան կանոնաւոր զարգացումն։

Նոյնպէս կարելի է ասել թէ Ռուսիա Հայաստանի համար աւելի համակիր միջամտութիւն պիտի անէր եթէ սոսիալիստներու շնորհիւ երկրին քաղաքականութեան վերայ չտիրէր համապատասխան կուսակցութիւնն։ Ցայտնի չէ թէ երբ ազատականք պիտի կրնան տիրող լինիլ։— Երանի՛ թէ լինէին ընդ հուպ, զի նոցա քաղաքականութիւն չատ աւելի նպաստաւոր պիտի լինի մեր դատին։

Ռուս սոսիալիստներու ինամն մեր դատին համար երկու կերպով կը հասնի, ուղղակի և անուղղակի։ Անուղղակի վնաս է մեզ ամեն ինչ որ մեր դրացի ռուս պետութեան վնաս է։ Ռուսիոյ զարգացման և արագ լուսաւորութեան արգելք եղող ամեն կուսակցութիւն անուղղակի վնաս կը հասցունէ բոլոր արեւելից, Թուրքիոյ և Հայաստանի։

Ուղղակի վնասն ալ այն է որ ռուս կառավարութեան ատելի սոսիալիստ ռուսահպատակներ գրչով և անձամբ Հայաստանի գործերուն կը խառնուին։ Եւրոպիոյ համալսարանաց մէջ ռուս և ռուսահայ ուսանողաց վերայ Զարին կառավարութիւնն խստիւ կը հսկէ և չի թողուր որ սոսիալիստ համոզումն ունեցող ուսանողներն Ռուսիա վերադառնան։ Եթէ Ռուսահայ սոսիալիստ ուսանողներն իրենց գաղափարակից ռուս հայրենակցաց մէջ գործէին և ռուսերէն թերթ հրատարակէին մեզ վնաս չունէր այնքան։ բայց որովհետև հայերէն թերթ կը հրատարակեն արտասահմանի մէջ և իբրև Հայ Ազգին սոսիալիստ գործիչքն կը ներկայանան աշխարհի, մեր դատն և արտաքին քաղաքականութիւնն ահագին դժուարութեանց կենթարկեն։ Այդպիսի թերթ մի արդէն չատնց կար, այժմ մէկ հատ ևս սկսած են հրատարակել Ժուիցերիոյ Ժընէվ քաղաքին մէջ։ Թերթին «ՀԱՄԱՅՆՔ» անունն Ժընէվի մէջ հրատարակուած OBSTCHINA ռուսերէն սոսիալիստ լրագրին անուան թարգմանութիւնն է, որ Commune կը նշանակէ։ Թէ ռուս սոսիալիստներ հայերէն «Համայնք»ին կ'օգնե՞ն կամ ո՞րքան կ'օգնեն, ա՛յն չեմք գիտեր, բայց տարակոյս չկայ թէ հայանուն և ռուսանուն սոսիալիստք սերտ և սրտագին խնամութեան մէջ են իբրեւ նոյն խէտականով ոգեւորուած գործիչներ։

Երկար խորհելու պէտք չկայ հասկանալու համար թէ Զարին կառավարութիւնն ո՞րքան դժգոհութեամբ կը տեսնէ որ ռուս սոսիալիստք կամ ոգա աշակերտք Հայոց մէջ յարգելի և համակրելի գործիչներ եղեր են։ Ոչ ինչ կրնայ այնքան պաղեցուցանել մենէ զՁարն որքան այն պարագայն թէ իւր գահու երդուեալ թշնամիք ազատ ասպարէզ գտած են մեր մէջ։

Պէտք է մեր ժողովուրդ քաջ իմանայ այս բան։ կարելի բան չէ որ մեք սոսիալիստներու, Զարին ոխերիմ թշնամեաց երես տամք և միանգամայն ուզեմք որ Զարն մեզ համակրի։

Մեք բոլորովին ծաղրելի կը լինիմք երբ ակնկալեմք որ Զարն ռուս սոսիալիստներու աշակերտներն կամ աշակերտաց աշակերտներն Թրքաց բանտէն կախաղանէն ազատելու համար միջնորդէ։

Եւ սակայն անտարակուսելի է թէ Զարին մէկ որոշ խօսքն աւելի կ'ազդէ

Սուլթանին քան ուրիշ ո և է տէրութեան միջնորդութիւնն ո՛նպաստ Հայոց։ Այսօր եթէ Զարն իւր յօնքեր պռոտէ Սուլթանին, սորա ձեռք կը թուլնայ և թող կուտայ իւր հայ զոհերն։

Մեր յարգելի երիտասարդ հայրենասէրներ պէտք է դիւրաւ ի վիա առնուն թէ Ռուս կառավարութիւնն կրնայ Հայոց ազգային եկեղեցւոյ յարու�և հայրենեաց ու ազատութեան սէրն յարգելի և բնական համարիլ, բայց չի կրնար յարգելի և բնական համարիլ որ ռուս եկեղեցին և ռուսական Զարութիւնն ոչնչացուցանելու ուխտ արած սոսիալիստներ մեր ազգային շարժման ղեկավար լինին։

Զ

Իբրև եզրակացութիւն կ'ասեմ թէ մեք յամախ քրիստոնեայ պետութեանց առ մեզ անտարբերութենէն կը գանգատիմք, բայց չեմք մտածեր թէ մեք եմք այդ անտարբերութեան համար ըստ մասին պատասխանատու։

Հռչակեմք թէ մեք կ'ուզեմք մեր հայրենիքն վերաշինել, թէ մեք մեր լեզուն, մեր ազգայնութիւն և մեր Հայաստանն երդուեալ եմք պաշտպանել ու փրկել լինի օգնութեամբ լինի ի հեռուկս ամէն քրիստոնեայ կամ չքրիստոնեայ պետութեանց, և եթէ այս յայտարարութեան համար ո և է կայսր, Զար կամ պետութիւն մեզ չսիրէ, թող չսիրէ։ բայց ահագին ապշութիւն կը գործեմք երբ մեր դատին ղեկավարութիւնն սոսիալիստներու յանձնելով ո և է տէրութեան անհամակրելի լինիմք։

Այլով բանիւ, պէտք է որ մեր ներքին քաղաքականութիւն և արտաքին քաղաքականութիւն իրարու ներդաշնակին։

Իբրև երկրորդ եզրակացութիւն

Կը յաւելումք թէ Ռուսիոյ և Անգլիոյ և այլ պետութեանց ապագայ յաջողութիւնն գուշակելանհնարլինելով՝ մեք պէտք է երկուքին ալ համակրութիւնն չահիլ ջանամք, զի երկուքն ալ կրնան մեզ օգտակար լինիլ։

Մեր քաղաքականութիւն չպիտի լինի Ռուսին առջև զԱնգլիացին պարսաւել և Անգլիացւոյն առջև զՌուսն խոսել։ Մեք պիտի ասամք թէ երկուքն ալ լաւ են, երկուքն ալ մեծ և հզօր կայսրութիւններ են, երկուքն ալ արևելքի քաղաքակրթութեան գործոյն մէջ նշանաւոր դեր կը կատարեն։ և մեք երկուքն ալ կը սիրեմք։

Բայց ո՞րն աւելի կը սիրեմք, Անգլիացի՞ն թէ Ռուսն։

Դորա պատասխան պարզ է։ երկուքէն որն որ մեզ աւելի՛ սիրէ, մեք ալ զայն աւելի պիտի սիրեմք բնականապէս։

Վերջին ժամանակներս Զարին կառավարութիւնն ընդունելով Արիմեան Հայրիկի ընտրութիւնն ի կաթողիկոսութիւն և ուրիշ հայասիրական փոքր ցոյցեր անելով աւելի իւր կոյմ միտեցուցանել սկսած է Հայ ազգին սէրն ու համակրանքն, և այդ յոյժ բնական է։ Եթէ Ռո՛ւսն օգնէ մեզ մեր ազգային ձգտմանց իրագործման համար և նորա՛ բարեգործութենէն մասնաւորապէս կամ գլխաւորապէս օգտիմք ինքնօրինութեան հասնելու, ի հարկէ մեր ազգ ռուսասէր կը լինի երախտագիտութեամբ, և կարքանակէ Ռուսաց արտաքին քաղաքականութեան։

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՀԱՅ ՇԱՐԺՄԱՆՑ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԷՆ

Ազնիւ խմբագրապետ «ՀԱՅՐ»ի,

Ձեր խնդիրքն հաճութեամբ կը կատարեմ, բայց այնքան երկար չպիտի գրեմ որչափ դուք կը ցանկաք։ Ես հէնց մի կամ երկու երեսի մէջ կ'ուզեմ բովանդակել մի երկայն պատմութիւն, մի քանի խոշոր գծերով պատմութեան կմախքն միայն դնելով ձեր ընթերցողաց առաջ։

Արդէն երեք տարիներէ ի վեր Կուկունեանց անունն ծանօթ է ամենքին։ Երբ նա յեղափոխական շարժումի սկսաւ, հետն ունէր մի այլ նշանաւոր ընկեր, Նաղարէթ Աղան։ Գործն սկսան ռուսական սահմանին մէջ և խումբ կազմեցին Թրքաց Հայաստան անցնելու նպատակով։ Շատ օրեր չանցած երկու գլխաւորներուն մէջտեղ անհամաձայնութիւն ծագեցաւ, կաղզմանի ձորին մէջ, Արաքսի եզերքը։ Կուկունեանց կ'ասէր թէ հարկ է սահմանն անցնիլ և Թուրքիոյ հողին վերայ գործ սկսիլ։ իսկ Նաղարէթ Աղայ չէր հաւա-

նէր, ասելով թէ պէտք է ընկերութեան հրամանին սպասել։ Նազարէթ Աղայ ուրեմն բաժանուեցաւ գնաց։ Խումբին գըլխաւոր մնաց Կուկունեանց։ Տաճկաստանի Բանանէն կամաւորներ էջմիածին իբրև թէ ուխտի կ'երթային, և ռուսաց Հայաստանէն ալ փոքրիկ խմբակներ, անհատներ հետ զհետէ ասպարէզ կ'իջնէին։ Հինգ, ութ, տասն, տասնհինգ հոգւոց բաղկացած փոքր խմբերու մարդ կը պատահէր ամէն օր, և Քրդերն սկսած էին հատ վախնալ։ Թէև հրացանաձգութիւններ և կրթութիւններ կը կատարուէին ձորերու մէջ, և գինեալ խմբեր համարձակ կ'երթևեկէին. Ռուս կառավարութիւնն ուշադիր չէր լինէր. զօրաւոր կառավարութեան մի սիրան թունաւ չելներ մի քանի հրացանական ճայթումներով. Թուրքաց սիրան է որ ճանճի բզզիւնին ալ ուշի ուշով միտ կը դնէ։

Թէ ինչո՞ւ Ռուսաց կառավարութիւնն յանկարծ արթնցաւ, դժուար է ասել. յետոյ կատարուած դատավարութեան պատմութենէն կ'երևի թէ Կուկունեանց խումբն իբրև ազգակային ամբաստանուած էր, և թէ բուն ռուսական հողի վերայ անմեղ Քրդեր, հովիւներ սպաննած և ոչխար յափշտակած էին և այլն։

Ես չեմ կարող հաւատալ կամ հերքել այդ գրոյց, բայց կրնամ կրկնել զայն, այսինքն թէ մեր այն նշանաւոր խումբն որ Թրքաց Հայաստանն ազատելու պիտի կընար, անկարգ և ազգակային շահատակութիւններ գործեց նոյն իսկ ռուս հողի վերայ։ Յանկարծ ուրեմն կառավարութեան խազախներն Հայ խմբին դէմ ուղարկուեցան։ Կուկունեանց խումբն չփոթեցաւ՝ ոմանք ասացին թէ պէտք է խազախներուն հետ պատերազմիլ, Կուկունեանց ինքն պնդեց թէ կառավարութեան զօրաց դէմ մարանչելու պէտք չկայ, իրենք ԿԱ յօդուածի գործադրութեան կ'աշխատին, օրինաւորութեան ճանապարհի մէջ են, և կարող են զօրաց անձնատուր լինիլ և իրենց արդար ընթացքն պաշտպանել։ Ուստի խմբին մէկ մասն փախուստ տուաւ, մէկ մասն ալ անձնատուր եղաւ զօրաց։ Կայազմանի կառավարիչն ձերբակալուած Հայերն Կարս ուղարկեց, ուր բանտարկուեցան նոր շինուած ստորերկրեայ բանտի մէջ։

Այս դէպքէն յետոյ դարձեալ մանր խմբեր կ'երևէին։ Բայց Քրդերն սիրտառին։ Նշանաւոր էր այդ միջոցին Գարապաղցի Յարութիւն, որ սուրն ի ձեռին դէմ կեցաւ Քրդերու մի ամբողջ խմբի, և Քրդերն չհամարձակեցան իւր վերայ յարձակիլ, թէև հրացանն արդէն խլած էին ձեռքէն։ Գարապաղցիք նշանաւոր են ֆիզիքական ուժով, գինուց ճարտար գործածութեամբ և սրտաստութեամբ։ Յարութիւն լեռներու և ձորերու մէջ շահատակութիւններ կը գործէր և ասպա ծպտեալ կուգար Կարսի մէջ կը շրջ.ր։ Վերջապէս մատնուելով ձերբակալուեցաւ Կարսի մէջ և զօրքերն կինքն բերդ տանելու տեղն ոպանեցին։ Այսպէս քաջն Յարութիւն ևս դատաւ իւր վախճան։

Երևանի կողմերէն եկած մի խումբ ևս տիրագին բաղդի հանդիպեցաւ։ Այդ խումբ ալ դեռ Թրքաց սահմանն չմտած, մինչ կը թափառէր, պատահեցան ձորի մէջ մի խեղճ Քրդու։ Տղա՛քներ, ասաց խմբապետն, պէտք է ոպաննել այդ լակոտ, չիցէ թէ լուր տանի։ Կը կրակեն ուրեմն, բայց Քրդու ջորին կը դարնեն միայն, Քուրդն կը փախչի մօտակայ վրաններուն կը ծանուցանէ միջադէպն. Քրդեր բազմութեամբ կուգան կը պաշարեն հայ խմբակն, կառաղօրէն կը մարանչին ոռքա վարէն նոքա վերէն։ Հայերէն վեց հոգի կը ոպաննուի, մին կը յաջողի գնտակի հարուածով ձգել մի Քրդու ձին, և կարծելով թէ Քուրդն վիրաւորուած է, կը յարձակի որ լմնցնէ, բայց Քուրդն ձիոյն ետև ապաստանած կ'արձակէ հրացանն և կը ոպաննէ Հայն։ Հայ խմբին միայն ութերորդ և վերջին անդամն ողջ կ'ազատի փախչելով։

Սէրտար անուն նշանաւոր խմբապետն ալ, որ նախկին ազգակապետ մ'էր ռուսական սահմանին մէջ, այդ միջոցին գործի վերայ էր նորէն, բայց Քրդերն զինքն խեղդեցին վատաբար։

Ռուսաց իշխանութիւնք խիստ միջոցներ ձեռք առին Հայոց այս շարժումներն վերջացուցանելու համար։ Պերնացի հարուստ մի Հայ որուն հիւր եղեր էին ասպատակխմբերէն ոմանք, աքսորուեցաւ։ Մի Հայ գիւղ գրէթէ գլխովին ոպառեցաւ խազախներու դունդ մի երկար ատեն կերակրելով։ Բոլոր հայ գիւղերու գիւղապետ կարգուեցան Յոյներ կամ Մալականներ, որպէս զի Հայերն չկարենան մարդիկ ու գործեր ծածուկ պահել։

ցոյն գիւղապետք աւելի քան զՄալականներն նեղութիւն տուին Հայոց։

Միւս կողմէն Կուկունեանց չկարողացաւ արդարանալ։ Տրուած վճռոյն դէմ բողոքեց. Երևանէն քննիչ եկաւ, և սա ալ վերահաստատեց վճիռն. Կուկունեան վերստին բողոքեց. Թիֆլիսէն քննիչ եկաւ. վերջապէս նաև Բեռդպուրկէն քննիչ յղուեցաւ, բայց վճիռն մնաց անփոփոխելի Կուկունեանցի և իւր ընկերաց մէկ մասին դէմ. այնպէս որ նախնապէս բանտարկուած 70 հոգւոց 30ն մնացին վերջապէս բերդարգել։

Պարոն խմբագրապետ, դուք ռուսահայերու վերայ բարձր համարում կը տածէք, գիտեմ, բայց չգիտեմ թէ այս հակիրճ պատմութիւնս ինչպէս պիտի պատասխանէ ձեր համարման։ Ես ասեմ իմ կարծիք, դուք ալ ձերն ասացէք։ Ինձ կ'երևի թէ որոշ ծրագրի համեմատ չեղան այս շարժումներն, ձեռնհաս ղեկավարութեան ներքոյ չգործեցին խմբապետներն, և չկար իրենց մէջ ընդհանուր յատակագիծ և համաձայնութիւն։ Բան մտնելու ժամ է, զարնե՞լ պէտք է ասացին, զարկին, բայց դժբաղդաբար ռուսաց հողի վերայ, և մանաւանդ, որպէս կ'ասեն ռուս իշխանութիւնք, անմեղ, անպարտ հրդեր, հովիներ սպանեցին, այսպէս մեր յեղափոխականներ բռնուեցան իբրեւ խռովարարներ, խաղաղութիւն խանգարողներ, իմ բան, իբրեւ աւազակախմբեր։

Ռուսաց հողին վերայ մեր պարոններուն այնպէս վխտալ ու գոռալն ցոյց տուաւ շուտով թէ սիրող կառավարութեան սկզբունքն և թոյլտուութեան չափերն ըստ բաւականին չէին հասկացած։

Երբ յեղափոխական խմբեր այսպէս հալածուեցան կամ ձերբակալուեցան բուն ռուս հողի վերայ և ռուս կառավարութեան ձեռքով, այն ատեն թուրք կառավարութիւնն չափազանց համարձակութիւն առաւ, և վստահ լինելով թէ ռուսի կողմէն չի յանդիմանուիր, սկսաւ խիստ հսկողութիւն ի գործ դնել Հայաստանի մէջ։ Կարելի է իմացած էր թէ ռուսահայեր բաւական հրացան մուծած էին Թրքաց Հայաստան, թէև հրացանաց չատն անպիտան կամ պակասաւոր էին։ Սմէն ուղևոր, ամէն երիտասարդ, ամէն ով որ մօրուսաւոր էր կամ ո և է կերպով կասկածելի երևէր, նեղութեանց կը մատնուէր։ Հետևելով ռուսաց օրինակին, զուտ հայ գիւղերու մէջ բերաւ դրաւ մի քանի քուրդ տներ, որպէս զի բան մի ծածուկ չկրնայ պահուիլ։ Համիտիյէ զօրք չինեց Քրդերէն։ Հայոց ամենափոքր խլրտումն արգիլելու, խափանելու ամէն հնարք մըտածեց։ Անցագրի տարօրինակ օրէնքներ հանեց երևան։ Տուրքերն անսովոր իրաստութեամբ հաւաքեց։ Այնպէս արաւ որ Ալաշկերտի, Խնուսի բազմահայ գաւառներն մասնաւորապէս ճմլուեցան և երեք տարիէ հետէ կը տկարանան, յուսահատութեամբ ցրուելու և քայքայուելու կը միտին։

Ես չեմ կարծեր, ազնիւ խմբագրապետ, թէ արտասահմանի Հայերն, նոյն իսկ չատ խօսող և չատ գիտնալ ձևացողներ, ճիշդ գաղափար ունին թէ ինչ մեծ թշուառութեան, ի՞նչ վտանգի մէջ է Հայաստան, մանաւանդ ռուսաց սահմանագլխին մօտ գտնուող գաւառներն։ Եւ այս վիճակն արգասիքն է ձախող շարժումներու։

Մնամ Ձեզ ի սրտէ յարգող
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

ՃԸՌ

ՏԵՍԱՔՆ ՍԱՔՈՒԱՐԵԱՔ ԳԱՔԵԳԵՏՆ

Ի ՎԵՐԱՑ ՇԻՐՄԻՆ ԼԵՒՈՆԻ ՎԵՐՋՆՈՑ

խօսեցեալ ի Սէն-Տընի, 26 Նոյ. 1893

(Տես նախորդ թիւն)

Այսպիսի քաջարթուն հովիւների և Ռուբինեան հարազատ հայ արիւն ունեցող իշխանների կառավարութեան ներքոյ միութեան խնդիրը ոչ մի հետևանք ունենալ չէ կարող։ Թէ կաթողիկոսները և թէ իշխանները պէտք է զգային որ նոքա իրենց զօրութիւնը աղգի ամբողջութեան մէջ պէտք է որոնէին միշտ, որ այդ ամբողջութեան գլուխականը խախտել՝ իրենց անմիջական հսկողութեան ներքոյ գըտնուող ժողովրդի գոյութեան արմատները կտրել կը նշանակէր. ուստի և յունական

կայսրների պահանջների առաջ նոքա յենուում էին միշտ Հայաստանում մնացած ժողովրդի վերայ. իսկ այդ ժողովուրդը հոգւով և սրտով անձնատուր էր իր նախնեաց աւանդած հաւատին։ Ամեն ինչ ուրիշ կերպարան առաւ, երբ Կիլիկիոյ իշխանութիւնը Լամբրոնի տէրերի ձեռքն անցաւ։ Սոքա սկզբից ևեթ Ռուբինեանց նախանձորդն էին եղել և սովորել էին նոցա հակառակ՝ յաճախ օտարի օգնութեանը դիմել։ Այս սովորութիւնը նոքա պահեցին դժբաղդաբար նաև թագաւորական գահի վերայ և նախ իրենք հետզհետէ մայր եկեղեցու գրկից անջատուելով, իրենց հեղինակութիւնը ազգի աչքում ձգեցին, և ապա իրենց իշխանութիւնը ազգի նուիրական շահերին հակառակ վարելով՝ նորա ստորանալուն, ջլատուելուն, ընկնելուն նպաստեցին։ Մի և նոյն ժամանակ արտաքին քաղաքական աշխարհը այնպիսի կերպարանափոխութիւն էր ստացել որ նոցա այս անխորհուրդ վարմունքը աւելի էր քաջալերում։ Մի կողմից խաչակիրների, միւս կողմից արեւելքից նոր եկած Թաթարների յարձակմանց ներքոյ ժամանակաւորապէս ընկճուելուց յետոյ, մահմետական ժողովուրդները սկսեցին նոր ուժով ետ մղել, հալածել ամեն ինչ որ քրիստոնէական էր. և խաչակիրների Ասորիքում հիմնած փոքր իշխանութիւնները մէկը միւսի ետևից նուաճելով. ամեն կողմից սպառնում, յարձակմունքներ էին գործում Կիլիկիայի վերայ։ Քրիստոնէութեան անունով վարած այս կռուի մէջ բնական էր որ Հայերը իրենց հաւատակից քրիստոնեաների մօտ օգնութիւն որոնէին. ցաւալին այն էր սակայն, որ նոյն իսկ այդ քրիստոնեաները դադարել էին քրիստոնէութեան համար կռուելուց իրենց իշխանութիւնները կորցնելուց առաջ հաւատ ու եռանդ էին կորցրել, որ նոցա ընդհանուր թշնամու առաջ միացնում, զօրացնում էր, և իրենց անձնական մանր շահերի ետևից էին ընկած։ Այս պատճառով Հեթումի յաջորդ հայ թագաւորների քաղաքականութիւնը հիմքից զուրկ էր և ինքն իրեն հակասող. հաւատի անունով օգնութիւն գտնելու համար նոքա յօժարում էին փոխել ծախել իրենց հայրերի աւանդած հաւատը։ Միութեան խնդիրը սոցա օրով լուրջ կերպարանք էր ստացել. բայց այժմ խօսքը ոչ թէ Յունաց այլ Հռովմէական եկեղեցու հետ միանալու մասին էր։ Այս եկեղեցին էր արևմուտքի քրիստոնեաներին տեղից շարժել, սուրբ տեղերը անհաւատներկ ձեռքից ազատելու համար արևելք բերել. իսկ այդ եկեղեցու գլուխը, խաչակրաց արշաւանքների գլխաւոր ղեկավարողը և ուղղութիւն տուողը միայն նոցա էր իբրեւ քրիստոնեայ ճանաչում, որոնք իւր կամքին, իւր իշխանութեան հնազանդ էին։ Նորանցից օգնութիւն ստանալու համար հայրերի սովրեցրած քրիստոնէութիւնը թողնել, նորա տուածին, նորա օրէնքներին հնազանդիլ պէտք էր։ Հայոց թագաւորներն այդ յանձը առան, բայց հայ ժողովուրդը նախադասեց առանց թագաւորի Ս. Լուսաւորչի հետևել քան թագաւորի հետ մէկտեղ Հռովմի Պապին. և լուսաւորչի հաւատը իրեն հաւատարիմ մնացած ժողովրդին առանց թագաւորի էլ պահեց մինչև այսօր, իսկ Պապի վերայ յոյս դնողների թագաւորութիւնը ընկաւ ա՜ռ՝ արագ քայլերով։

Բնական է որ Կիլիկիայի թագաւորութիւնը հայութեան ամբողջութիւնից աւելի խորթացաւ, երբ նա լուսինեան իշխանների ձեռքն անցաւ, որոնք արդէն իսկ ազգով և հաւատով լատին լինելով ի բնէ լատին աշխարհի հետ կապուած էին և այն տեղ էին իրենց զօրութիւնը որոնում։ Այս ցեղը որ Ֆրանսիայից ունենալով իւր ծագումը՝ նախ Երուսաղեմում և ապա Կիպրոս կղզու վերայ թագաւորական փառքի էր հասել. ընծայել է մեզ միայն երկու թագաւորներ, որոնց կարճատև, բայց իւր հետևանքներով շատ նշանաւոր իշխանութեան մասին մեր ձեռքն է հասել բաղդի բերմամբ մի հետաքրքիր մանրամասն նկարագրութիւն՝ մի ականատես անձի, մեր այս վերջին դժբաղդ թագաւորի խոստովանահայր Դարդալի գործ։ Վերջինս ամենայն գովութեամբ է խօսում երկու լուսինեան թագաւորների համար։ Ես ու մեզ անտեղի է կասկածել նորա պատմածների ճշմարտութիւնը, սակայն մենք այդ պատմածներից հակառակ իւր կամքին իսկ կարող ենք տեսնել, թէ ինչու այդ քաջ, լաւ առաքինութիւններով օժտուած և բարի ձգտումների տէր իշխանների տիրապետութիւնը. այնքան կարճատև եղաւ տանելով իւր հետ և ջնջելով աշխարհի վերայից

«Հայ թագաւոր» անունը։ Նոքա սկզբից ևեթ իրենց իբրև օտար նկատելով ջանք գործ չդրին իրենց իշխած ժողովրդի հոգին ըմբռնել, իրենց ձգտումներն ու կեանքի նպատակը այդ ժողովրդի ձգտումների հետ սերտ կերպով միացնել։ Նոքա չյարգեցին այս ժողովրդի առանձնայատկութիւնները, նուիրական սրբութիւնները։ ուստի և Հայ ժողովուրդը սրտով նոցա բաղդին մասնակից չեղաւ և մինչեւ իսկ օգնեց նոցա ընկնելուն։ Առաջինն այս իշխաններից Կիլի, Կոստանդին Գ. անունով թագաւորից, հազիւ 2 տարի միայն գահի վերայ մնաց։ Իրենք Հայերը դաւով սպաննեցին նորան, անշուշտ այն նպատակաւ որ երկիրը օտարի ձեռքից հանելով մի հայ իշխանի յանձին։ Այսպէս էլ եղաւ և այնուհետև դեռ էլի 2 հայ թագաւորներ ունեցանք մենք՝ Կոստանդին Դ. և Կոստանդին Ե. անուններով։ Բայց ինչպէս երևում է սոքա սիրնդունակ անձինք լինելով և չունենալով հարազատ իշխանական ծագում, ուրեմն և հաստատուն իրաւունքներ թագաւորութեան վերայ, չի մատնեցին ամենեւին իրենց երկրի տեւական զօրութեան ու բարգաւաճման մասին, այլ ինչպէս սովորական է վարձկան բռնակալներին՝ միայն իրենց անձնական ապահովութեան համար հոգ տարան։ Այսպիսով Հայերը սարսռած եղան կրկին լուսինեան Լեւոն իշխանին Կոստանդին Գ.ի եղբօրորդուն գահի վերայ հրաւիրել։ Լեւոն Ե., որ «խալ բայատրութիւնների շրջորհիւ մեղանում Լեւոն Զ. անուամբ յայտնի է, թագաւորեց ամենադժբաղդ հանգամանքների մէջ 1374 թուին։ Նա փախստականի պէս թշնամիներից պաշարուած Սիս մայրաքաղաքը մտաւ և իւր մի քանի ամսուայ թագաւորութիւնը այդ մայրաքաղաքը թշնամիների դէմ պաշտպանելու գործ դրաւ։ Հայերը, ինչպէս նոյն ինքն Դարդէլ վկայում է, նորան ամենայն սիրով ընդունեցին, իբրեւ մի փրկարարի։ բայց շատ չանցած նոքա սկսեցին իրենց համար ուրիշ տէր փնտռել։ Այս հանգամանքը ուրիշ ոչինչով բացատրել չէ կարելի, այլ եթէ նորանով միակ որ նոքա օտարազգի իշխանի օրով իրենց հաւատը վտանգուած էին տեսնում, իրենց հայութիւնը անարգուած։ Դարդէլ նոցա մեղադրում է, թէ մատնութեամբ իրենց թագաւորին մահմետականների ձեռքը տուին։ և այդ մատնութեան մէջ նա մեղադրում է նաև կաթողիկոսին, բայց նորա վկայութիւնից պարզ երեւում է, որ Հայերի միտքը չէր ամենեւին մահմետականների լուծի տակ մտնել, այլ նոքա ցանկանում էին միայն Բարիլոնում գըտնուող մի մեծ հայ իշխան Լեւոնի փոխանակ գահ նստեցնել։ Երբ նոցա սպասածին բոլորովին հակառակ մի այլազգի մահմետական զօրավար եկաւ Սիսը պաշարեց մենք տեսնում ենք, որ Հայեր են կրկին իրենց թագաւորին մինչև վերջին շունչ պաշտպանողները։ վերջնիս իւր հետ բերած կիպրոսցի թիկնապահները, որոնցով նա իրան միշտ շրջապատած էր պահում, այն համազգի մերձաւորները, որոնց նա տէրութեան մէջ ամենաբարձր պաշտօններ էր տուել, վտանգի րոպէում դաւաճանում, հեռանում են նորանից։ Սակայն մի քանի կտրիճ Հայերի վերջին րոպէում դործ դրած դրած հերոսական ճիգը անօգուտ անցաւ։ Հայոց թագաւորը դերի գնաց Գահիրէ։ Այստեղ ևս նորա դառն վիճակը թեթեւցնողները օտար իշխանների մօտ պարգեւ գտած հայ մեծամեծներ էին։ և մի հայ ասպետ էր վերջապէս (որին թէև Դարտէլ իբրեւ դաւաճանի է մեղադրում) Կաստալիայի թագաւորից դժբաղդ գերեալի համար փրկանք բերողների առաջնորդը։ Ինչպէս ձեզ յայտնի է գերութիւնից ազատուելուց յետոյ դեռ բաւական ժամանակ ապրեց Լեւոն վերջին։ զուր տեղը Աւինեանում նստող պապին, Սպանիայի և Ֆռանսայի արքունիքը դիմելով, իւր կորցրած թագաւորութիւնը ձեռք բերելու համար օգնութիւն հայցելով՝ մինչև որ այս քաղաքում վերջին հանգիստը գըտաւ։

Եւ այսօր երբ մենք 500 տարի նորա տարալի մահուան օրից անցնելուց յետոյ այս տեղ ենք խմբուած, մեր նպատակը չէ կարող լինել դատաստանի նստել և ազգերգական մի բաղդի վերայ մեր կամայական վճիռները կարդալ, ծրագիրներ դնել այն մարդոց առաջ, որ անցեալում ուրիշ պայմանների ներքոյ, ուրիշ դաղափարներով են կեանքի կռիւներն վարել։ Մենք միայն, ինչպէս ասուեցաւ, պատմութիւնից դաս առնել կարող ենք, ներկան հասկանալու և ապագայի համար նպատրաստուելու։ մենք այս նուիրական շիրմի առաջ պիտի խոնարհինք և այստեղ

կարդալու ջանանք Հայոց վերջին թագաւորի մեզ թողած կըտակը, այն կըտակը, որ հայի ամբողջ պատմական կեանքի դառն փորձերի արդիւնքն է բովանդակում։ Եթէ իմ զգացումներն ինձ չեն մոլորեցնում, այն ժամանակ պանդխտութեան մէջ մեռած և կարծես այդ թշուառ պանդխտութիւնը մեզ ժառանգութիւն թողած, օտարի վերայ ունեցած յոյսերով խաբուած մեր այս վերջին թագաւորը՝ եթէ այս բոպէին դլուխ բարձրացնելու լինէր, նորա առաջին խօսքը պիտի լինէր, օտարի վերայ ձեր յոյսը մի դնէք, Հայեր, օտարը, նա միշտ է օտար, ուր որ դանուի՛ք ձեր աչքը թող միշտ դէպի մայրենի աշխարհը դարձած լինի, այնտեղ են ձեր գոյութեան արմատները. մի՛ թողնէք որ այդ արմատներն խզուին, ծառն արմատով է ծառ, տուն հիմամբ է տուն։ Լա՛ւ միտ դրէք պանդուխտ Նահապետի խրատին և ճանաչեցէք թէ արդարև քանց օտարի վարդ քաղցր է հայրենեաց փուշ։ Եւ ապա ձեր հայրենակիցների շրջանում որոնեցէք ամենուրեք ձեր այդ անձկալի հայրենիքը, հայ հայի հետ միացած հայութիւն ստեղծեցէք, այդ հայ միութեան մէջ ձեր բոլոր ոյժը որոնեցէք, համերաշխ ուժերով կարդացրէք ձեր մէջ այդ ներքին ոյժը, ազգային կեանք, ազգային առաքինութիւններ և համազուած եղէք, որ եթէ ձեր մէջ զօրեղ է այդ ներքին ոյժը՝ նա վաղ թէ ուշ աշխարհի առաջ և իւր փառահեղ արտայայտութիւնը կ'ունենայ։ Սիրեցէ՛ք ու բոլոր հոգւով և սրտով կապուած մնացէք ձեր ազգային սուրբ եկեղեցու հետ, որ այդ հայկական ոյժի պահողը զտողն ու նուիրագործողն է եղել դարերի ընթացքում. սովորեցէք լաւ գընահատել ձեր հոգեւոր ու բարոյական կեանքի կեդրոն այն Երուսաղէմը, որ իբրեւ մի լուսաւոր փարոս կեանքի փոթորկալից ծովի մէջ ձեր հաւատարիմ առաջնորդը պէտք է լինի, որ հին Երուսաղէմի պէս միայն մի տեղի հետ կապուած չէ, այլ որ ամեն տեղ ձեզ հետեւում հովանաւորում է, և ուսոի աւելի մեծ իրաւունքով պահանջում է ձեզնից՝ երգել միշտ Բաբիլոնի դերիների պէս և ասել. Եթէ ուրացայց զքեզ Երուսաղէմ, ուրացցի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ։

Եւ վերջապէս թողնէք կրկնեմ, որ թէ այս հոգեւոր Երուսաղէմի նշանակութիւնը, թէ մեր ամբողջ ազգային կեանքն առհասարակ ճանաչելու համար մենք պէտք է անցեալին դիմենք, ապագան անցեալի շարունակութիւնն է և որպէս զի այդ ապագան գոյութիւն և հաստատութիւն ունենայ պէտք է անցեալի վերայ հիմնուած լինի, այն տեղից ուղղութիւն և առաջնորդող սկզբունքներ առնի։ այդ անցեալը գնահատելուն համար է նա և որ այսօր այստեղ ենք հաւաքուած, և որպէս զի լաւ գնահատենք նորան ու հասկանանք, Հայկ ու Լեւոնին յիշենք միշտ եղբարք, Թափ տանք նորանցից հնութեան փոշին. Վերածնենք մեր մէջ հայ հոգի, հայ կեանք, Կեցցէ՛ շատ օրեր մայր մեր Հայաստան։

1893 Դեկտ. 8 ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ

Փարիզ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՅՆՔ անունով փոքր թերթ մի սկսած է հրատարակուիլ ի Ժընէվ։ Թերթին առաջին թիւն կը յայտարարէ թէ իւր նպատակն է համայնական կազմակերպութեան (commune) «առաւելութիւն ների արծարծելը և տարածելը Հայերիս մէջ,» և կը հաւատայ իրրեւ ուղղափառ ընկերվարական, թէ «հայ ժողովրդի տընտեսական ազատութիւնը պիտի լինի միակ աղբիւր իւր երջանկութեան, ինչպէս որ այժմեան տնտեսական յոռի դրութիւնն է նրա թշուառութեան բուն պատճառը։» Ուրեմն «հայ ժողովրդի իսկական փրկութիւնը նրա տնտեսական ազատութեան վրայ պիտի լինի հիմնուած։»

Թերթին դաղափարք սոսիալիստ յեղափոխական են «Հնչակի» նման, ոչ արդէն տարիներէ հետէ կը քարոզէ նոյն վարդապետութիւններն։

Կ'երեւի թէ—(կ'ասեմ՝ կ'ասեմ՝ զի լոկ մեր վերայ եղած տպաւորութիւնն է այս, և իրրեւ այնպէս կուտամ՝ ոչ իբրեւ ստոյգ) թէ «Համայնք» աւելի վարդապետական մասին ոյժ պիտի տայ, հայ ապստամբական լուրեր ալ հաղորդելով հանդերձ, իսկ «Հնչակ» լոկ լրագիր պիտի լինի, թուրք կառավարութեան դէմ խօսելու և Հայոց մէջ կատարուած շար-

ժուռներն տեղեկագրելու ընդարձակօրէն։

«ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ» է ուրիշ նոր թերթի մի անունն, որոյ ծանուցումն կ'անէ «Հնչակ» իւր Դեկտ. թուով։ Այս նոր թերթն օրկանն է եղեր հայ բանւոր յեղափոխականների Ասոցիացիյայի (ընկերութեան)։ Հնչակ ուրախ է որ այդ թերթի երեւան գալովը՝ «կ'ունենայ իր կրտսեր եղբայրը, որ՝ նոյնանման ուղղութեան թելադրութեամբ՝ կը ձայնակցէ նրան.» և կը փութայ խրատել իւր կրտսեր եղբայր «աւելի խնամք տանել նրա յօդուածների խմբագրութեան վրա։»

Մեք չեմք ստացած այս թերթ, բայց անունէն կը հասկանամք թէ մեր սոսիալ-յեղափոխականք Հայոց հետ խօսելու մասին արտաքին ձեւերն աւելի հասկացողութեամբ յարդարել սկսած են։ Շատ հաւանական է որ Հնչակ արդէն դժգոհ է իւր տխրահնչիւն անունէն, և գոհ է թերեւս որ իւր կրտսեր եղբայր աւելի նըշանակիչ և հայկական անունով կ'ելնէ յասպարէզ։

Անունն չնչին բան է, բայց ունի իւր կարեւորութիւն իբրեւ նշանակիչ ներքին փոփոխութեանց։ Թէև սոցիալիսդ թերթ մի չեմք սիրեր մեք, բայց կը սիրեմք տեսնել թէ մեր սոցիալիսդ երիտասարդներն հայկական ձեւերն գոնէ յարգելու հարկն զգալ սկսած են, և կը մաղթեմք որ կամաց կամաց զգան նաև իրենց ուրիշ և աւելի էական չափազանցութիւններն— իմանան թէ խնդրոց խնդիրն տնտեսական չէ, թէ Հայաստանի ինչպէս բոլոր աղգաց ու աղանց բուն ցաւն տնտեսական չէ և իսկական դարմանն ալ տնտեսական չի պիտի լինի— ընկերվարականութիւնն չի պիտի լինի. այլ թէ տնտեսական ցաւն և իւր դարմանն կը կազմէ միայն մէկ մասն մարդկային յառաջդիմութեան և դարգացման ահագին և բարդ խնդրոյն։

Ուրեմն մեր «Հնչակ»եղբօր ուրախութեանն մասնակից չեմք մեք տեսնելով կրտսեր եղբօրն կամ երկու եղբայրներուն ծնունդն։ Հազիւ կարելի է ասել թէ սոսիալիսդ յեղափոխական հայ գործաւորներ կան, և անոնց բերան երկու—երեք կամ չորս թերթ տեսնել ուրախալի բան չէ. սոցիալիսդ փոքրիկ, չնչին մարմնոյ համար այդքան բերան շատ շատ է։ Այդ շռայլութեան վերայ մարդ կրնայ աւելի ցաւիլ նկատելով որ օտար կերակրով լեցուած այդ բերաններ տնչարմար են առաջնորդ հայթայթելՀայ մարմնոյն։

ԽՐԻՄԵԱՆՔ

ՆԻՈՒ ԵՈՐՔԻ

ՑՕԴՈՒԱԾ Ա.—Այս ընկերութեան նպատակն է Նիու Եորքի Հայոց մէջ կրթութիւն և օգտակար տեղեկութիւններ տարածել և եղբայրական սէր մշակել։

Այս նպատակին համար Խրիմեանք կը հաստատեն լսարան մի— ԽՐԻՄԵԱՆ ԼՍԱՐԱՆ— ուր կարող անհատներ կը հրաւիրուին մատենախօսելու և պատմական, ազգային, կրօնական, գիտական և տնտեսական նիւթերու վերայ ճառ խօսելու կամ կարդալու։

ՑՕԴ. Բ.—Ընկերութիւնս կ'ունենայ մի գանձապետ որ տուրքերն կը գանձէ և հաշիւներն կը պահէ. մի Քարտուղար որ թղթակցութիւններն կը կատարէ. մի փոխքարտուղար որ Քարտուղարին կ'օգնէ. նաև ինն անդամներէ բաղկացեալ մի Տընօրէն Ժողով, որոյ օրինաւոր անդամները են քարտուղարն ու գանձապետն, և եօթն ուրիշ անձինք ալ յատկապէս կ'ընտրուին։ Տնօր. Ժողովոյ պաշտօնն է (1) Տընօրինել Լսարանի գործերն, գտնել ճառախօսներ, երեկոյթներն հաճելի և կանոնաւոր գործելու համար կարգադրութիւններ անել. (2) գանձապետի հաշիւներն առնուլ. (3) ընկերութեան անդամներ ընդունիլ. (4) իւր մէջէն պակասած անդամի տեղ նորն ընտրել։

Ընկերութիւնն մշտական նախագահ չունենար, այլ Տնօր. Ժողովն ամեն երեկոյթի համար անդամներէն յարմարագոյն մէկն կամ միւսն ատենապետ կը նշանակէ։

ՑՕԴ. Գ.—Տարեկան Ժողովոյ մէջ, որ Դեկտ. ամսուն մէջ կը կատարուի, Տնօր. Ժողովն իւր տեղեկագիրն կը ներկայացնէ հանդերձ գանձային հաշուով։

ՑՕԴ. Դ.—Տարեկան Ժողովոյն մէջ

ներկայ անդամոց քուէարկութեամբ կ'ընտրուին մէկ տարուոյ համար քարտուղար, գանձապետ և եօթն անդամք ևս Տնօր. Ժողովոյ համար, որ Յունուար ամսոյ առաջին նստին մէջ կը սկսին պաշտօնավարել։

ՅՕԴ. Ե.— Ընկերութեանս անդամ կ'ընդունուին երկու սեռից ևս, և տիկնայք կամ օրիորդք ընկերութեան բոլոր պաշտօններուն ընտրելի են արանց հետ հաւասար իրաւամբ։

ՅՕԴ. Զ.—Ամեն անդամ յիսուն սենթ տարեկան տուրք պիտի վճարէ. կէս առաջի մէկէն տարուոյն սկիզբն, կամ քառորդ տոլար երկու անգամէն։

ՅՕԴ. Է.—Ո՛և է անդամ իրաւունք ունի իրեն ծանօթ մէկն ընտրելի առաջարկել այս առաջարկութիւնն ժողովոց մէջ հրապարակաւ չի կրնար լինիլ, այլ գրաւոր՝ պէս կ'ուղղուի քարտուղարին, և սա կը մատուցանէ առաջարկութիւնն Տնօր. Ժողովոյ, և եթէ Տնօր. Ժողովն, յետ քննութեան, յարմար դատէ, կ'ընդունի ընտրելին յանդամակցութիւն Խրիմեանց և կը հրաւիրէ զնա իբրեւ օրինաւոր անդամ։ Անդամոց ընտրութեան համար, ուրեմն, ընդհանուր Ժողովոյ մէջ քուէարկութիւն չի լինիր։

Անդամոց ընտրութեան մէջ Տնօր. Ժողովն մասնաւոր հոգ պիտի տանի ընտրելու միայն այնպիսի անձինքներ որ փոքրը ի շատէ կրթուած լինելով կարենան Տիկնայց և օրիորդներու ընկերակցութեան մէջ քաղաքավար և շնորհքով վարմունք ունենալ, այնպէս որ ընկերային բաւական բարձր աստիճան պահպանուի երեկոյթներուն մէջ։

ՅՕԴ. Ը.— Ընկերութեանս երեկոյթներուն կամ լսարանին ներկայ գտնուող հիւրերն յարգանօք կ'ընդունուին, բայց եթէ ոևէ մէկն անկիրթ կամ անկարգ գտնուի, այնպիսին սրահէն դուրս ելնել կը պարտաւորի։

ՅՕԴ. Թ.—Խօսուած կամ կարդացուած ճառերուն վերայ վիճաբանութիւն չի լինիր, և անդամ չեղողներն ոևէ առթիւ չեն կրնար մասնակցիլ հրապարակային խօսքի բայց միայն եթէ յատկապէս հրաւիրուած լինին։

ՆԻՈՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆՈՒԱՐ, 1894

ՆԱՏԱԿ ԻՄԱՍԹԻՈՅ

Մալաթիա, 15 Յունուար 1894

Ազնիւ խմբագիր

Հասարակութիւնն յետին ծայր թշուառութեան մէջ է։ Հնդեղինաց նուազութիւն մը կ'տիրէ, և ամեն ինչ սովորականին եռապատիկ գնովն հազիւ կրնամք գտնել։ Կառավարութիւնն պարտուց հաւաքման համար խիստ միջոցներ կը գործածէ։ Ժողովուրդն ներկայիս մեծ պարտքի տակ է. լուսաւորչականք 700,000 դահ. և բողոքականք 40,000 դահեկան ծանր պարտուց տակ կը ճնշուին։ Երկրաշարժն երբեմն թեթև ցնցումներ կընէ. բազում աւերեալ տուներ դեռ կիսակործան կըսպասեն։ Ժողովուրդն իւր օրական ապրուստն հոգալու անկարող դրից մէջ է, ի՞նտոր պիտի վերանորոգէ աւերեալ շէնքերն և ի՞նտոր պիտի կարենայ վճարել կառավարութեան խիստ միջոցներով պահանջած անցեալ և ներկայ տուրքերն։ Կը փափքիմք եկեղեցին եւ երեցատունն վերաշինել, բայց չունիմք միջոց։ Կը խնդրեմք որ մեր ամերիկաբնակ պանդուխտ եղբարք մեր ներկայ վիճակն լրջմտորէն ի նկատ առնուն և շուտով մեզ աջակցին յղելով իրենց կառավարական պարտքերն, և նաև աջակցին իրենց լումաներով Աստուծոյ տան շինութեան։

* * *

ԱՆԿԼԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Տարեկան Ժողովն տեղի ունեցաւ Յունուար 17ին, ընդ նախագահութիւամբ Տէր Ֆրանսիս Սթիվընսընի։ Տարեկան տեղեկագիրն ցաւ կը յայտնէր թէ Թագուհւոյն կառավարութիւնն բաւական աղդու միջոցներ ձեռք առած չէր գոհացուցմանալու համար Անգլիայէն, Սկովտիայէն, Իռլանտիայէն և Ուէյլզէն ուղղեալ ապերսագրոց՝ յօգուտ հալածեալ և տանջեալ բանտարկելոց ի Թուրքիա։ Միայն Զարն, յԵւրոպա, ապդուապէս պահանջած էր Հայոց Կաթողիկոսին ազատումն, և նորա

պահանջի անմիջապէս գոհացում տուած էր (Սուլթանն։) Նախագահն Սթիվընսն իւր երկար և ուշագրաւ ճառին մէջ ասաց թէ Բարիզէն, Նիւ Եորքէն, Զիքակոյէն, Վիէննայէն, Կալկաթէն, Գահիրէէն, Մարսիլիայէն միացեալ ջանքեր անելու և անձնական նախանձոտութեանց վերջ տալու բաղձանք յայտնուած են։ Այս կը ցուցնէ թէ բուն Հայոց մէջ նպատակի և ջանից միութեան հարկն ևս քան զևս զգացուիլ սկսած է։ Նախագահն վերջապէս Բ. Դրան յետադէմ քաղաքականութիւնն դատապարտող և Թագուհւոյն կառավարութեան կողմանէ ուելի կորովի կացք մի հանդէպ հայկական խնդրոյն առնուելու որոշում մի առաջարկեց որ Տէր Յակոբեանի կողմանէ երկրորդուեցաւ, և որոյ մէկ օրինակն յղուեցաւ պետական քարտուղարին։ Տէյլի Նիւզի և այլ հայասէր նշանաւոր Անգլիացւոց շնորհակալութեան քուէ տրուեցաւ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ղարադալայէն (Կասսի մօտ) կը գրէ թղթակից մի Յունուար 13 թուով—

Գնացի Էջմիածին, տեսայ Վեհ. Հայրիկն։ Նորին Օծութիւնը խօսեցաւ մանաւանդ գաղթականների մասին, և ասաց թէ երկու ամսուայ միջոցին 725 խնդիր է ստացել որոնք հայ են ուզում, և ասում էր որ այդ մասին դիմել է Երևանի Նահանգապետին. նա պատասխանել է «Ես չեմ կարող բնիկ ժողովրդին օգնել, ի՞նչպէս օգնել կարող եմ գաղթականներին։»

Նիհիլիսաք ի Ռուսիա

Երբ անցեալներ Բարիզի ոստիկանութիւնն յանկարծ կոխեց անիշխանականներու բնակարաններն, ի միջի այլոց գտաւ նաև թուղթեր որք ռուսերէն մէջ բնակող ռուսներ կը մատնեն։ Այդ թղթեր յատուկ պատուիրակի միջոցաւ յղուած են ռուս կառավարութեան։ Կոմս Դելեանոֆ, նախարար Հանրային կրթութեան, միջոցներ ձեռք առած է բարձր կրթական հաստատութեանց մէջ ո և է խռովութիւն խափանելու համար, գի ուսանողք Նիհիլիստ հակամիտութիւններ ունենալ կը կարծուին։

Տէյլի Նիւզ, խօսելով Անկլեհայկական ընկերակցութեան տարեկան ժողովոյ առթիւ, կ'ասէ թէ «Երբեմն երբեմն կը հասկանան կ. Պոլսոյ մէջ թէ Ասիոյ մէկ անկիւն գործուած գործեր հոս տանելոց վերայ կը հոչակուին, և թէ ժողովուրդ մի որ կրնայ յամր լինիլ գործելու՝ արագ է զգալու։

«Մեծին Բրիտանիոյ մէջ հանրային կարծիքն բոլորովին քրիստոնեայ Հայոց թեր է, և Բ. Դուռն կրնայ գիտնալ թէ զայնս հալածելով՝ այնպիսի զգացում յարուցած է որուն անկարող պիտի լինի պատասխանել»։

Կ. Պոլսոյ Լանկայի Հայ-բողոքական եկեղեցին որոշած լինելով չիրիմ կանգնել Խարբերդի ողբացեալ հովիւ Պատ. Մ. Շմաւոնեանի գրեզմանին վերայ, հանգանակութեան ձեռնարկած է առ այս նպատակ։ Հանգանակութիւնն Ազգ. պետարանի հրամանատարութեան տակն է։ Ուուստրի, Բրովիդէնսի, Նիու Եորքի և այլ քաղաքաց մէջ բնակող բողոքական Հայոց ալ մասնակցութիւնն բաղձալի լինելով՝ ձեռնարկող մարմինն, յատուկ նամակ ուղղած է առ Տէր Մ. Ն. Թ. Նահիկեան, որ յՈուուսթր և խնդիրն պարզած է։

Հանգուցեալ Պատ. Մ. Շմաւոնեանի անունն, ազնիւ հոգին և ծառայութիւնքն ամենուն յայտնի են, ուստի և յուսալի է թէ բազումք մասնակցին այս երկրէն ևս այն հագանակութեան քչով կամ շատով։ Նուէրներն պէտք է յղուին առ

Mr. M. S. T. Nahigian
Worcester MASS.

Թրայէն կը գրէ մեզ բաժանորդ մի.—

Խմբագիր Տէր.— ՀԱՅԲԻ չորրորդ տարին կը շնորհաւորեմ։ Անիկա կը կարդամ ես և կ'ուսումնասիրեմ տաղ առ տաղ։ Ամեն Հայ գործաւոր երանի թէ այս ամենաընտիր թերթը իր դպրոցը ընէր եւ սովէր Հայոց լեզու ու Հայկական քաղաքականութիւն։ Ես իբրեւ խոնարհ գործաւոր մը իմ ընկերներուս կ'ըսեմ. կարդացէք ՀԱՅԲԻՐ եթէ կ'ուզեք լուսամիտ լինիլ և գիտնալ թէ ինչպէս պէտք է սիրելու փրկել Հայրենիքը։

Ս. ԱՐԱՄԵԱՆ

Սուլթան Համիտ «Խանէտանը Օսմանիյէ» անուն նոր պատուանշան մի ը-

տեղծեր է, որ մինչև կայսերական գերդաստանին անդամոց կրնայ շնորհուիլ։ Փատիշահն յատուկ պատգամաւորութեան մի ձեռքով նոր նշանէն մէկ հատ յղած է Գարմանիոյ կայսեր։

Ռուսիոյ ազդեցութիւնն արագօրէն կը զօրանայ Շահին արքունեաց վերայ, և կառավարական շրջանաց մէջ կարծիք կը յայտնուի եղեր թէ գուցէ Նասրէտտինի յաջորդն Ռուսիոյ գերիշխանութեան ներքև մնած ինքնօրէն մի իշխան կը լինի։

ԱՕԴ

Նոր սոկեայ (Elgin) ժամացոյցս պիտի ծախեմ պարագաներէն սակեալ. խիստ գեղեցիկ և սիրուն է։ Ճաշակի տէր Պարոն մը կրնայ ունենալ զայն արժան գնով։

Հասցէ

M. G. H.
14 Shawmut Ave.
Boston MASS.

Կը խնդրեմք որ մինի օրտերի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E.(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլլարով, անուանն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հան դերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Ը.ՕԳՈՒՅԻՆ ՓՈԽԸԴՐՈՂ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէռ, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէռ, եթէ պայմանն հազար թալէռի է, կամ մինչև հինգ հազար թալէռ, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէռն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօդուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ

1554 B,way

46 և 47 փողոցներուն միջև

Constantinople Bazzar'ի, (ԲՈՆՍԹԱՆԹԻՆՈՓԼ ՊԱԶԱՐ) մէջ ունի Թրքական մեծաքանակ գորգեր(խալիներ)և Թրքական ուրիշ ապրանք, զորս կ'ուզէ բոլորովին ծախել լմնցունելոյժ ԴԻՒՐԱԳՆԻ, ՀՈԼՍԷՑԼՈՎ (wholesale)։ Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, ժամանակին հոլսէյլ ապրանք գնելու։

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵԳԱԿԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ